

միակ յոյսով ընդունակ է անել ամէն տեսակ այլանդակութիւններ ,  
ստախօսութիւն , խաբերայութիւն , զրպարտութիւն :

(Շարունակելի)

Դոկտոր Կ. ՓԱԾԱԾԵՍՆ

### ՀԱՅՈՒԹՅՈՒՆ

#### ՄԱՄՈՒԼԻ ԲԱԺԻՆԸ

Հ. ԳԵՐՈՎԲԵԿ ԶՐԱԲԵԱՆ , Անկանոն գիրք առաքելականք : ( Դ-րց  
համանգարանի հայկական հին եւ նոր գպրութեանց : ) Վենետ . 1904 :  
8° եր . ժե+496 : Գինն է՝ 5 ֆր .

Խնչպէս հին եւ նոր Կտակարաններու՝ նոյնպէս եւ առաքեալներու  
կենսագրութեանց յատուկ գրքերու ( Դործք Առաքելոց ) անկանոններն  
ալ գոյութիւն ունին , որոնք հին ժամանակ յերիւրուած են այս ու  
այն կղերականի կողմէ : Այստեսակ ձեռագիրներ շատ կը գտնուին ա-  
րեւելեան գրեթէ բոլոր լեզուներով : Ներկայ հրատարակութեւնս ալ  
առաքեալներու մասին գրուած եւ մեր նախնիքներէն հայերէնի թարգ-  
մանուած անվաւեր գրքերու հաւաքածուն է , զոր բաղմաթիւ ձեռա-  
գիրներու հետ բաղդատելով կազմած է ո . Ղազարի երիտասարդ եւ ե-  
ռանդուն միաբաններէն Հ. Ք. Գ. Զրաքեան : Դիրքը նույիրուած է և ի յի-  
շտակ Մկրտչի էմին » :

Գր . ԶԱԼԱՊՈՒՇԵԱՆ , Հայոց հարցը Ռուսաստանում : Ռուսով 1905 :  
8° եր . 36 :

Ռուսներէն յեզուով գրուած այս գրքոյին իրաւամբ պատիւ կը բե-  
րէ համակրելի հեղինակին , որ գիտցած է իրաւաբանական փաստերու  
վրայ հաստատելով՝ հետեւեալ վեց գլուխներու մէջ ամիոփել Հայոց եի-  
մակուան ցաւերն ու պահանջները . 1) Փոքր ինչ պատմութիւն եւ փոքր  
ինչ վիճակագրութիւն . 2) Հայոց գպրոցներու փակումը . 3) Հայոց բարե-  
գործական եւ կրթական հիմնարկութիւններու փակումը . 4) Եկեղեցա-  
կան կալուածներու խլումը եւ կաթողիկոսի աստիճանի նուազեցումը .  
5) Ինչո՞ւ կը յուզուին Հայերը . 6) Ինչպէս կը լուծուի Հայոց հարցը :  
Այս գլուխներուն կը յաջորդէ — Հայերուն հանրագիրը : Աւրախալի  
է , որ մօտերս պիտի կարենանք հայերէն թարգմանութիւնն ալ ողջու-  
նել պ. Գր . Զալանուշեանի այս նշանաւոր աշխատասիրութեան :

Լ. ԵՂԻԱԶԱՐԵԱՆ եւ Ռ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ . Հայոց հին ճարտարապե-  
տութեան նշանաւոր : Տետր Ա-Դ : Վետերք . 1904-5 :

1870-ին Պետերբուրդի մէջ Հայաստանի եւ Վրաստանի մէջ ըիւ-  
ղանդական ճարտարապետութեան հնակերտներ » անունով Փրանսերէն

ու ոռուսերէն բացատրութիւններով գծանկարներու զիրք մը հրատարակնել էր Գ. Գրիգոր : Հիմա այդ հրատարակութիւններն օրինակ մ'իրոկ չէ կարելի գոնել հրապարակի վրայ : Ներկայ զործա՝ այդ հրատարակութեան կրկին տպագրութիւնն է գրելի է . բայց մեծ փոփոխ և թիւններով, աւելի թոխացած եւ աւելի կատարելագործուած , որուն մէջ աչքի կը զարնեն անմիջապէս՝ գծանկար պատճեններու եւ յատակագծերու ևս միտուին՝ շէնքերու զուսատիպ պատկերներ , եւ հայերէն բացատրութիւններ ու պատամական աեսութիւններ եւս : Տպագրութիւնը կը կատարուի նոյն Աթաղաքային ճարտարապետութեան Ճեմարանի ուսուուցչապետ եւ ակադեմիկ Գ. Գրիմմի խմբագրութեամբ » : որ գրաւական մըն է գործին գիտնական ուղղութեամբ պատրաստուած լինելուն : Խրագանչիւր տետր կը պարունակէ 5 առանձին թէրթ : Մինչեւ հիմա լոյս տեսած են Հազրատի ազգային հնակերտներու պատկերները միայն, 15 թէրթ , բոլորն ալ ընտիր տպագրութեամբ : Փափազողները կարող են դիմել Կովկասի զրավաճառներուն , վճարելով ամբողջ գործին համար —որ պիտի բաղկանայ 10 տետրերէ —ճանապարհածախով՝ 12 ր .

**ՑԱՐՈՒԹԻՒՆ** ԹՈՒՄԱՆՆԵՍԽՆ. Համառոտ Մտուգաբանութիւն հայոց լեզու : Գետական ստորին եւ միջնակարգ դպրոցների համար : Թիֆլ. 1905 . տպ աշերմ . ա: 8° եր . հ4 : Գինն է՝ 40 կ .

**ԲԱԿԻՐԱԾ Ա.ՑՎԱԶԵԱՆԸ** , Սեւ յաղթանակ . վէպիկ : Թիֆլ . 1903 . տպ . Վարդան . ա: 8° եր . 72 : Գինն է՝ 25 կ .

**Հ. Տ. -Ա.ՍՈՒՊԻԱՄԱՏԱՏՐԵԱՆԸ** , Բառարան հայ կենսագրութեանց (հայգէտներով) 1451-1904 : Պրակ Ա . 45 պատկերներով : Թիֆլիս 1904 տպ . Թութաթ : 8° եր . 181 : Գինն է՝ 70 կ .

Շատ ժամանակէ ի վեր զգալի եղած էր հայ կենսադրական բառարանի մը պէտքը : Այս գործին ձեռնարկեց հեղինակը 1898-ին , եւ մեծամեծ զժուարութիւններով զլուխ հանեց միայն անցեալ տարի , բայց ինչպէս ինք կը գանգատի , եղած են մարդիկ , որոնք զլացած են իրենց կենսագրութիւնը տալ , հակառակ իր կրկնակի դիմումներուն : Ներկայ հատորը , որ ամրութէ Ա տառը կը կազմէ , գոհացուցիչ զաղափար մը կուտայ մեզ , եւ թոյլ կուտայ համակրութեամբ ողջունել այս կարեւոր գործը :

—, Խաչատուր Արովեան : Տփիս 1905 , տպ . «Աշխատանք» : 16° եր . 32 : Գինն է՝ 3 կ .

**Խ. Արովեանի ամփոփ կենսագրութիւնն է այս :** որուն մէջ ուշագրութեան արժանի է հետեւեալ յայտնութիւնը . «Կրտ անյայտանալուն ամենաճիշտ աղեկութիւնն այն է . որ Երեւանի պարսկիներն են նրան կինզանի թաղել . եւ . . . Նրա գերեզմանն արդէն գանուած է Երեւանի մօտ — Մտմադ Բէգ Շաֆիրեգովի այգու մէջ » : Կ. Յ. Բ.